# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«08» դեկտեմբերի 2014թ. ԹԻՎ 147

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկում ենք Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ին կայացած թիվ11 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝ 10 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2014 թվականի N 39

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28 -Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ11 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

1. Ասլանյան Սամվել
2. Արշակյան Համլետ
3. Կարապետյան Սերգո
4. Մարտիրոսյան Բարեղամ
5. Շաքոյան Սուրեն
6. Սարգսյան Վարդան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Արմավիրի մարզի Հացիկի
գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի նոյեմբերի 28-ի
թիվ39 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի
թիվ11 արտահերթ նիստի

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2015 թվականի դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակի,հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
4. Դրամական օգնություն տրամադրելու մասին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» նոյեմբերի 2014 թվականի N 40-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2015 թվականի դրույքաչափերը` համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ` (7) Դեմ` (0) Ձեռնպահ` (0)

1. Ասլանյան Սամվել
2. Արշակյան Համլետ
3. Կարապետյան Սերգո
4. Մարտիրոսյան Բարեղամ
5. Շաբոյան Սուրեն
6. Սարգսյան Վարդան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հացիկի գյուղական համայնքի
ավագանու 2014թ. նոյեմբերի 28-ի
թիվ 40-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի, շինությունների (ներառյալ` ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել` **հիմնական օբյեկտների համար`**

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում` այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 /տասը հազար/ դրամ:
2) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`
ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 15 000 /տասնհինգ հազար/ դրամ.
բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 25000 /քսանհինգ հազար/ դրամ.
գ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 30 000 /երեսուն հազար/ դրամ.

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար**

3) մինչև 20 /քսան/ քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,
4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով`

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում` ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն` 1000 / մեկ հազար/ դրամ.
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը` օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում` ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 3000 /երեք հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել`
1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/ դրամ:
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար 4000 /չորս հազար/ դրամ:
5. Համայնքի տարածքում
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:
2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ:
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել
50 000 / հիսուն հազար/ դրամ:
7. Համայնքի տարածքում` առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24. 00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել`
1) առևտրի օբյեկտների համար` 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 50 000 /հիսուն հազար/ դրամ.
3) բաղնիքների /սաունաների/ համար` 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.
4) խաղատների կազմակերպման համար` 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար` 250 000 /երկու հարյուր հազար/ դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար` 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ.
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել`
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 1000 /մեկ հազար/ դրամ:
2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2500 / երկու հազար հինգ հարյուր/ դրամ:
3) այլ արտաքին գովազդի համար` 500 /հինգ հարյուր/ դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար` 700 /յոթ հարյուր/ դրամ.
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ.
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ.
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար` գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 5000 /հինգ հազար/ դրամ.
12. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար` գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց սահմանել փոխհատուցման վճար 1000 /մեկ հազար/ դրամ.
13. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար` մասնակիցների վճար 5000 /հինգ հազար/ դրամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» նոյեմբերի 2014թվականի N 41

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով ավագանին

Որոշեց

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և համայնքային բյուջետային հիմնարկների աշխատակիցների քանակը,հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 01-ից.

Կողմ՝ (7) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝ (0)

1. Ասլանյան Սամվել
2. Արշակյան Համլետ
3. Կարապետյան Սերգո
4. Մարտիրոսյան Բարեղամ
5. Շաբոյան Սուրեն
6. Սարգսյան Վարդան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հացիկի գյուղական համայնքի
ավագանու 2014թ նոյեմբերի 28 -ի
թիվ41 որոշման

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույքաչափը |
|---|---|---|---|
| | Համայնքի ղեկավար | 1 | 270 000 |
| | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 125 000 |
| | Աշխատակազմի քարտուղար | 1 | 125 000 |
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | | |
| | Գլխավոր մասնագետ | 1 | 105 000 |
| | Առաջատար մասնագետ | 2 | 85 000 |
| | Առաջին կարգի մասնագետ | 2 | 73 000 |
| | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 71 000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| | Վարորդ | 1 | 66 137 |
| | Հավաքարար | 1 | 66 137 |
| | Ընդամենը | 11 | 1 144 274 |

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 1
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Գրադարանավարուհի | 1 | 66 137 |
| | Ընդամենը | 1 | 66 137 |

ՀԱՎԵԼՎԱԾ
Հացիկի գյուղական համայնքի
ավագանու 2014թ.նոյեմբերի 28 -ի
թիվ41 որոշման

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 2
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 66137 |
| 2 | Քանոնի դասատու | 1 | 66137 |
| | Ընդամենը | 2 | 132 274 |

Համայնքի ղեկավար՝ Ա.Եղիազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» նոյեմբերի 2014 թվականի N 42

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և համայնքի բնակիչների դիմումները`

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի թվով 20 սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն` համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ` (7) Դեմ` (0) Ձեռնպահ` (0)

1. Ասլանյան Սամվել
2. Արշակյան Համլետ
3. Կարապետյան Սերգո
4. Մարտիրոսյան Բարեղամ
5. Շաբոյան Սուրեն
6. Սարգսյան Վարդան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հացիկի գյուղական համայնքի
ավագանու 2014թ.նոյեմբերի 28-ի
թիվ 42 որոշման

Ցուցակ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկի գյուղական համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների

| հ/հ | Ազգանուն, անուն | գումարի չափը /դր./ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Սարգսյան Հմայակ | 50 000 |
| 2 | Վասիլյան Ժորա | 50 000 |
| 3 | Ենոքյան Սմբատ | 50 000 |
| 4 | Բերբերյան Հովհաննես | 50 000 |
| 5 | Հալուլյան Լևոն | 50 000 |
| 6 | Տոնոյան Վրեժ | 50 000 |
| 7 | Տոնոյան Անժիկ | 50 000 |
| 8 | Խաչատրյան Աշոտ | 50 000 |
| 9 | Խանոյան Վաչիկ | 50 000 |
| 10 | Մատնադյան Սիրուշ | 50 000 |
| 11 | Տոնոյան Իշխան | 50 000 |
| 12 | Հակոբյան Արմենակ | 50 000 |
| 13 | Մանուկյան Ռոզա | 50 000 |
| 14 | Թորոսյան Լիլյա | 50 000 |
| 15 | Ջուռնաչյան Աննա | 50 000 |
| 16 | Թարջումանյան Ալվարդ | 50 000 |
| 17 | Մելիքյան Հասմիկ | 50 000 |
| 18 | Բիսլամյան Վարդուհի | 50 000 |
| 19 | Հովհաննիսյան Սրբուհի | 50 000 |
| 20 | Տոնոյան Գայանե | 50 000 |